

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ԳՂ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կատարող՝ ԵՐԵՎԱՆԻ 175 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՉՈՒՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԴԱՍԱԽՈՍ՝ ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2022

ԼԵՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 65 ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. ՀՀ անտառային ռեսուրսների ընդհանուր բնութագիրը, էկոլոգիական նշանակությունը և տնտեսական գնահատումը
3. ՀՀ անտառային ռեսուրսների պատմական անցյալը
4. Անտառային ռեսուրսների օգտագործման և պահպանության ռազմավարական ուղղությունները
5. Եզրակացություններ և առաջարկություններ
6. Օգտագործված գրականության ցանկ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անտառն անտառային կամ անտառապատման նպատակով հատկացված այլ հողերում ծառաթփային բուսականության գերակշռությամբ կենսաբանական բազմազանության ու բնական միջավայրի բաղադրիչների փոխադարձորեն կապված և միմյանց վրա փոխազդող ամբողջություն է, որի նվազագույն մակերեսը կազմում է 0,1 հեկտար, նվազագույն լայնությունը՝ 10 մետր, և որտեղ ծառերի սաղարթը ծածկում է տվյալ տարածքի առնվազն 30 տոկոսը, ինչպես նաև նախկինում անտառածածկ անտառային հողերի ոչ անտառածածկ տարածքները:

Հայաստանի Հանրապետության անտառները և անտառային հողերը 1993 թվականի անտառների պետական հաշվառման (վերջին հաշվառում) արդյունքներով կազմում է երկրի տարածքի շուրջ 11.2 %-ը՝ 460 հազ. հեկտար, որից 334.1 հազ. հեկտարն անտառածածկ տարածքներ են (այս տվյալները չեն ընդգրկում հետագա տարիներին անտառային տարածքներում տեղի ունեցած փոփոխությունները): Համաձայն 2011 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ,Հայաստանում կենսաբազմազանության ինտեգրված կառավարումե ծրագրի կողմից հեռահար գոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի անտառածածկի մակերեսը կազմում է 332.332 հեկտար կամ երկրի ընդհանուր տարածքի շուրջ 11.17 %-ը: Հայաստանի Հանրապետության անտառներն օժտված են հարուստ տեսակային կազմով (323 տեսակ ծառ և թուփ): Հայաստանի Հանրապետության անտառներում հանդիպում են 130 տեսակի վայրի պտղատուներ: Հիմնական անտառկազմող տեսակներն են կաղնին, հաճարենին, բոխին, սոճին: Հայաստանի Հանրապետությունում անտառները տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ, 62 %-ը գտնվում է հյուսիս-արևելքում, 2 %-ը՝ կենտրոնական Հայաստանում: Հայաստանի Հանրապետությունում անտառները, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նշանակության՝ դասակարգվում են՝

ա) պաշտպանական նշանակության,

բ) հատուկ նշանակության,

գ) արտադրական նշանակության:

Պաշտպանական նշանակության անտառներ են՝ ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները, բարձր թեքության (30 աստիճանից ավել) վրա գտնվող անտառները, անտառների վերին և ստորին սահմանների 200 մետր լայնությամբ տարածքը, կիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային գոտիներում աճող անտառները, բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով: Պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը:

Հատուկ նշանակության անտառներ են՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները, քաղաքային և քաղաքամերձ անտառները, ռեկրեացիոն և առողջարարական անտառները, սահմանային, ռազմական նշանակության անտառները, պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները, սանիտարական գոտիները պահպանող անտառները: Հատուկ նշանակության անտառներում սահմանափակվում և արգելվում են անտառօգտագործման այն ձևերը, որոնք չեն համապատասխանում այդ տարածքների

պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռեժիմին:

Արտադրական նշանակության անտառներն են բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

Անտառների հիմնական խնդիրներն են՝ ապօրինի անտառօգտագործումը, արածեցումը, կլիմայի փոփոխությունը, հրդեհները և փոթորիկները, անտառային տեսակների հիվանդությունները և վնասատուները:

2. ՀՀ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Անտառը բնության կողմից մարդուն պարգևված անգնահատելի հարստությունն է: Հսկայական է նրա ջրհավաք, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ դերը, վիթխարի է նրա նշանակությունը մարդկանց առողջության պահպանման, շրջապատող միջավայրի բարելավման, տնտեսության զարգացման գործում: Եվ պատահական չէ, որ տվյալ երկրի բնության հարստությունների գնահատման ամենահիմնական չափանիշը դա անտառն է: Եթե տվյալ երկիրը հարուստ է անտառներով, ապա հարուստ է նաև ջրերով, ռելիեֆային ռեսուրսներով, կենդանաբանական և բուսական աշխարհով, վայրի պտուղներով, դեղաբույսերով և այլն: Ինչպես նաև, անտառները բարելավում են կլիմայական պայմանները, օդը հարստացնում թթվածնով: Անտառը որպես բնական լանդշաֆտ հանդիսանում է կենսոլորտի տարրերից մեկը: Աճելով բոլոր աշխարհամասերում (բացի Անտարկտիդայից), անտառը զբաղեցնում է շուրջ 41 մլրդ հա (երկրագնդի մակերեսի 8%-ը կամ ցամաքի 31%) կատարում է տնտեսական և բնապահպանական դեր: ՀՀ անտառային ֆոնդը 1993թ-ի հաշվարկային տվյալներով կազմում է 459.900 հա, որից անտառային հողերն են 392.300 հա, այդ թվում անտառածածկ տարածքներ՝ 334.100 հա (հանրապետության տարածքի շուրջ 11.2%-ը), որից արհեստական անտառտնկարկները կազմում են 36.900 հա, չմիակցված անտառանշակույթները 13.400 հա, անտառային տնկարկները 300 հա, նոսրուտները 1900 հա, ծառահատված-չվերականգնված տարածքները 200 հա, բացատները և ամայի տարածքները 16.700 հա:

Հայաստանի 334.100 հա անտառներն ըստ նպատակայնության դասված են հետևյալ կերպ՝ պաշտպանական 49.4%, կանաչ գոտիներ 15.9%, կուրորտային 1.8%, արգելոցային 5.3%, գետամերձ ու ճանապարհամերձ արգելված գոտիներ և երթուղիների պաշտպանիչ անտառային շերտեր 8.4%:

Հայաստանի անտառներում աճում են 260 տեսակից ավելի ծառ ու թուփ, որոնց բացարձակ գերակշռող մասը լայնասաղարթավոր ծառեր են, օժտված բարձրարժեք բնափայտով: Դրանցից հիմնական անտառակազմող տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, թեղին, կեչին, սոչին, դաժին, գիհին: Մյուս տեսակները՝ հացի, թխկի, փոշնի, կեռասենի, տանձենի, խնձորենի, և այլն, որպես ուղեկցող մասնակցում են հիմնական ծառատեսակների խառը ծառուտների ձևավորմանը:

Հանրապետության անտառներում աճում են կաղնու 5 տեսակ, որոնցից հիմնական անտառակազմող են 3 տեսակը՝ խոշորառեջ կաղնի, վրացական կաղնի և արաքսյան կաղնի: Կաղնու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 120.000 հա կամ հանրապետության անտառածածկ տարածքի 35.9%, որից սերմնային ծագում ունեցող բարձրաբուն ծառուտները 64.300 հա, կոճղաշիվային ցածրաբուն անտառները 57.700 հա, կամ կաղնուտների 46.4%, որոնք հիմնականում գտնվում են կենտրոնական անտառատնտեսական մարզի կղզյակային անտառներում, կամ մյուս մարզերի անտառի ստորին գոտում:

Տարածքային տեսակետից երկրորդ տեղում է 96.600 հա կամ անտառածածկ տարածքի 28.9%, հաճարի անտառները, որոնք աճում են հյուսիսարևելյան անտառատնտեսական մարզի հյուսիսային կողմնադրության լանջերին, ծովի

մակերևույթից 950-1800մ բարձրությունների վրա: Հաճարի անտառների շարունակական ինտենսիվ օգտագործման հետևանքով ներկայումս նրանք զգալի նոսրացել են:

Կովկասյան բոխին աճում է անտառատնտեսական բոլոր մարզերում՝ 900-1000-2000-2200մ բարձրությունների վրա, ուր այն մասնակցում է կաղնու, առանձին դեպքերում և հաճարի բարդ ծառուտների ձևավորմանը, որպես երկրորդ շարահարկի ծառատեսակ, կամ հանդես է գալիս ածանցյալ միատարր ծառուտներով: Բոխու գերակշռությամբ ծառուտներն իրենց տարածքներով զբաղեցնում են երրորդ տեղը՝ 55.100 հա, կամ հանրապետության անտառածածկ տարածքի 16.5%:

Սոճու բնական անտառներ Հայաստանում պահպանվել են միայն հյուսիսարևելյան անտառատնտեսական մարզում, զբաղեցնելով սահմանափակ տարածք (մեծ 900հա) Գուգարքի, Ստեփանավանի, Դիլիջանի և մասամբ Տավուշի անտառներում: Քանի որ սոճին մեզանում հանդիսանում են անտառամշակութային հիմնական ծառատեսակ, ներկայումս նրա միակցված տնկարկները կազմում են 17.7 հազ. հա կամ անտառածածկ տարածքի 5.3%-ը: Բնական սոճուտները հիմնականում զբաղեցնում են հարավարևմտյան և հարավարևելյան լանջերը 1000-1900մ բարձրությունների վրա: Շնորհիվ սոճու արհեստական երիտասարդ տնկարկների, որոնք կազմում են սոճուտների շուրջ 97%-ը, անտառազնահատման հաշվարկներում զգալի իջել է նրանց միջին պաշարը՝ 34.5մ³/հա:

Գիհու լուսավոր նոսր անտառները հիմնականում ձևավորված են 2 տեսակով՝ գիհի բազմապտուղ և գիհի գարշահոտ, որոնց մշտական ուղղկիցն է երկարատեփուկը: Նշված 3 տեսակներից բացի, նայած կլիմայական պայմաններին, գիհու նոսր անտառներում հանդես են գալիս գիհի թզուկային և գիհի կազակական: Վերջիններս առանձին վայրերում (2500-2700մ բարձրություններում) առաջացնում են փոքր համակեցություններ: Գիհու նոսր անտառները հանդիպում են անտառատնտեսական բոլոր մարզերում, ծովի մակերևույթից 500-2400-2500մ բարձրություններում՝ առաջացնելով հիմնականում միատարր, երբեմն լայնասաղարթավոր տեսակների (փռչնի, պիստակենի, նշենի, վրացական թխկի, դաժի և այլն) հետ միասին լուսավոր խառը ծառուտներ, որոնք զբաղեցնում են 8400 հա, կամ անտառածածկ տարածքի 2.5%: 1 հա-ի միջին պաշարը կազմում է 19մ³: Մյուս ծառատեսակները՝ կեչի, թխկի, թեղի, հացենի, տանձենի, խնձորենի, կենի, արջատղլենի, սոսի, ընկուզենի և այլն, որոնք հանդես են գալիս հիմնականում անտառակազմող տեսակների հետ միասին, որպես ուղեկցող երբեմն առաջացնելով ոչ մեծ միատարր ծառուտներ, միասին վերցրած զբաղեցնում են ընդամենը 28հազ. հա կամ անտառածածկ տարածքի 8.4%-ը:

Հայաստանի անտառների փայտանյութի պաշարը, մինչև 1992-1997թթ. զանգվածային ծառահատումները, կազմում էր՝ 41,74մլն մ³: Տարեկան ընդհանուր միջին աճը՝ 0,45մլն մ³, մեկ հեկտարի միջին պաշարը՝ 125 մ³, միջին աճը՝ 1,3 մ³, միջին տարիքը՝ 99: Բերված ցուցանիշները վկայում են, որ հանրապետության անտառները երկարամյա ոչ համակարգված, երբեմն ինտենսիվ անտառօգտագործման հետևանքով խիստ քայքայվել են և նրանցում եղած ներկա պաշարը և աճը անհամեմատ ցածր են անտառաճման առկա պայմանների պոտենցյալ հնարավորություններից:

Հայաստանի Հանրապետությունում անտառները, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նպատակային նշանակության դասակարգվում են՝ պաշտպանական, հատուկ և արտադրական նշանակության:

Հանրապետությունում անտառների արդյունավետության միջին ցուցանիշը 3.6 բոնիտետ է (անտառներում հողային պայմանների բերրիության չափանիշ՝ արտահայտված ծառերի աճով, պայմանավորված նրանց հասակով, լրիվությամբ, կազմով, ձևով, ծագումով (սերմնային, վեգետատիվ): Որոշում են համապատասխան հասակում՝ ծառերի միջին բարձրությամբ), միջին լրիվությունը՝ 0.55 (մեկ լրիվություն ընդունվում է լրիվ միակցված տնկարկը), բնափայտի միջին պաշարը կազմում է 125 մ³/հա, տարեկան միջին աճը՝ 1.3 մ³/հա:

Անտառները հանրապետության տարածքում տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ, դրանց 62 % գտնվում է հյուսիս-արևելքում, 36 %՝ հարավ-արևելքում և միայն 2 %՝ կենտրոնական Հայաստանում:

Հանրապետության անտառներն աչքի են ընկնում բնական ռեսուրսների հարստությամբ և կենսաբազմազանության առատությամբ: Այստեղ հանդիպում են 274 տեսակի արորիզեն ծառեր ու թփեր, որոնցից էնդեմ ծառերն ու թփերը կազմում են 25 տեսակ, իսկ ռելիկտային տեսակները՝ 31: Անտառկազմող հիմնական տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, սոճին: Այս չորս տեսակները զբաղեցնում են հանրապետության անտառածածկ տարածության 89.1%-ը և անտառների պաշարների 97.2 %-ը:

3. ՀՀ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՑԱԼԸ

Հայաստանի ներկա սակավ անտառապատվածությունը և նրա անհավասարաչափ տեղաբաշխվածությունը հետևանքն է մարդածին և կլմայական գործոնների: Մարդածին գործունեության բացասական ազդեցությունը առանձնապես ուժեղ է արտահայտվել Հայաստանի հարավային շրջաններում, որոնք միշտ եղել են խիտ բնակեցված և դարեր շարունակ հանդիսացել են այլազգի նվաճողների ասպատակողների թափերաբեմ, որի ընթացքում նյութական և հոգևոր մշակույթի հետ մեկտեղ ոչնչացվել են նաև անտառները: Վերջինիս նպաստել է նաև տեղական բնակչությունը, որն անտառային տարածքների հաշվին շարունակաբար ընդարձակել է վարելահողերի և արոտավայրերի տարածքները:

Անտառապատ տարածքների կրճատումը շարունակվել է նաև մեր ժամանակներում: Շատ հետազոտողներ, ելնելով պատմական նյութերից և ժամանակակից բուսաբանական հավաքածուների ուսումնասիրություններից, ենթադրում են, որ Սևանի տարածաշրջանը եղել է բավականին անտառապատ: Անտառապատ են եղել ոչ միայն Արեգունի և Սևանի լեռնաշղթաները, ուր մինչև օրս պահպանվել են անտառների հետքերը, այլև Վարդենիսի լեռնաշղթայի հարավարևելյան հատվածը: Իսկ Սոտքը նախկինում հայտին է եղել փայտի բարձրորակ առարկաների արտադրությամբ, որը բնորոշ է անտառային շրջաններին: Սակայն, ի հակադրություն այս ամենի, ըստ Պ.Ա. Խուրշուդյանի, նախկինում Սևանի ավազանում անտառապատ են եղել Արեգունի և Սևանի լեռնաշղթաների միյն լճահայաց լանճերը, Փամբակի լեռնաշղթայի հարավարևելյան լեռնաբազուկները, ինչպես նաև Ղարաբաղյան լեռնավահանի լճահայաց հյուսիս-արևմտյան լեռնաբազուկները, որոնք մինչև 2500-2600մ բարձրությունները ծածկված են եղել խոշորառեջ կաղնու խառն անտառներով: Սևանի և Արեգունի լեռնաշղթաների հարավային լճահայաց չոր լանջերը պատված են եղել բազմապտուղ գիհու նոսր անտառներով, որոնք պահպանվել են մինչև օրս և անկասկած ունեն առաջնային ծագում: Վերջինս խոշորառեջ կաղնու համեմատությամբ լինելով ավելի ջերմասեր բարձրացել է մինչև 2200-2400մ բարձրությունները, որտեղ երիզվել է կաղնու և կեչու կորաբուն ծառուտներով: Բացառված չէ, որ անտառապատ են եղել Վարդենիսի լեռնավահանի հյուսիսային լեռնաբազուկները, որտեղ վաղեմի անտառների տեսական կազմից ներկայումս պահպանվել են 72 տեսակ ծառ և թուփ:

Իսկ Գեղամա լեռնավահանի հուսիսային լանջերի անտառապատվածությունը վկայում է Նորադուզի մոտակայքում 400-450մ խորության վրա 9-10 մլն տարվա վաղեմության նստվածքներում հաճարի և բարդու դրոշմված տերևների հայտնաբերումը: Այդ են ապացուցում նաև Սևանի ավազանում հնէաբանական պեղումներից հայտնաբերված փայտյա առարկաները՝ Լճաշենում ջրահատակային նստվածքներից հանված զինակառքը, որի անվաղողերը պատրաստված են եղել կաղնու, իսկ շրջողակը՝ կեցու փայտից: Գավառի դամբարանաբլուրների պեղումներից (մ.թ.ա. 6-րդ դար) հայտնաբերվել են կաղնու, հացենու, սոճու, թխկու, բարդու, իսկ

Վարդենիսի դամբարանաբլուրներից (մ.թ.ա. 8-6-րդ դար)՝ գիհու, կաղնու, չիչխանի, հացենու փայտից պատրաստված կենցաղային առարկաներ:

Սևանի ավազանից հարավ-արևելք, Վարդենիսի լեռնավահանի, Վայքի, Ջանգեզուրի լեռնաշղթաների հյուսիս-արևելյան լեռնաբազուկների և Ղարաբաղյան լեռնավահանի հյուսիսարևմտյան լեռնաբազուկների միջև ընկած է Վայոց ձորը (Արփա գետի ավազանի): Այս հատվածը նախկինում մ.թ. առաջին հազարամյակում եղել է անտառածածկ, որի հետքերը առանձին կղզյակներով պահպանվել են մինչև օրս: Արփա գետի ավազանի ներքին մասերում մինչև 1200-1300մ բարձրության չոր լեռնալանջերը զբաղեցրել են նշենու, պիստակենու, ինչպես նաև գիհու միատարր և խառը լուսավոր նոսր անտառները, որոնք առանձին հատվածներով պահպանվել են մինչև օրս: Ավազանի միջին մասում հյուսիսային և արևելյան կողմնադրության լեռնալանջերը պատված են եղել խոշորառեջ կաղնու խառը անտառներով, իսկ հարավային արևակող չոր լանջերը՝ կաղնու և բազմապտուղ գիհու նոսր ծառուտներով, որոնք ձգվել են մինչև 2700մ բարձրություններ: Այս անտառների մնացորդները պահպանվել են Արփա գետի և նրա վտակների ավազաններում՝ Վայքի լեռնաշղթայի վրա Արտավանի կաղնուտներ, Որոտանի լեռնանցքի կիրճերում պահպանված անտառամասերը, Ջերմուկի անտառային զանգվածները, որոնք ձգվում են մինչև 2500-2600մ բարձրություններ:

Վայքից հարավ-արևելք ընկած է Սյունիք բնապատմական շրջանը, որը սկսվում է Արաքս գետի ափից (Մեղրի) և ձգվում է մինչև Որոտանի լեռնանցքը, զբաղեցնելով Ջանգեզուրի լեռնաշղթայի և Ղարաբաղյան լեռնավահանի միջև ընկած հատվածն, ընդգրկելով Մեղրու ու Բարգուշատի լեռնաշղթաները: Այս շրջանի տարածքի մեծ մասը դեռ ոչ վաղ անցյալում եղել է անտառածածկ, որոնք մասամբ պահպանվել են Ջանգեզուրի լեռնաշղթայի հարավարևելյան հատվածում և Բարգուշատի ու Մեղրիի լեռնաշղթաների վրա: Սյունիքի հյուսիսային հատվածի, ինչպես և Վայքի անտառների հիմնական մասը ոչնչացվել են 10-րդ դարում արաբական արշավանքների ժամանակ: Այնուհետև անտառների զանգվածային ոչնչացումը շարունակվել է պարսիկ, սելջուկ զորականների կողմից: Սյունիքի ներկայիս անտառազուրկ այս հատվածի ձորակներում դեռևս պահպանվել են ոչ վաղ անցյալ անտառների հետքերը խոշորառեջ կաղնու մացառուտների վերածված խմբավորումներով: Անտառային բուսականության պահպանության աստիճանը Սյունիքի շրջանում սերտորեն կապված է ռելիեֆի բնույթի հետ: Այսպես, մեղմ լեռնալանջերում անտառային բուսականությունը ընդհանրապես բացակայում է, քանի որ այդ տեղանքները առավել ինտենսիվ կերպով են ենթարկվել անտառահատման և արածեցման, զառիթափ լեռնալանջերում անտառները պահպանվել են ոչ մեծ կղզյակներով և միայն խիստ զառիթափ, դժվարամատչելի լեռնալանջերում, որտեղ մարդու ազդեցությունը, հասկանալի պատճառներով թույլ է եղել, պահպանվել են բարձրաբուն անտառները: Անտառները իսպառ վերացվել են նաև Որոտանի աջափնյա վտակ Գետաթաղ գետի հովտում և հենց Որոտանի հովտում Շամբ գյուղի շրջակայքում:

Հանրապետության կենտրոնական մասը (Արարատյան գոգավորությունը), որն ընդգրկում է Գեղամա լեռներից մինչև Արաքս գետը, Ուրծի լեռնաշղթային մինչև Արագած լեռնազանգվածի արևելյան և հարավային կողմնադրության լանջերը, ծովի մակերևույթիվ 850-4090մ բարձրությունները, պատմական անցյալում պետք է, որ եղած լինի զգալի անտառապատ, որի վկայությունն է Արմավիրի շրջանում նավթի և գազի հետախուզման կենտրոնում, միոցենի նստվածքներում 86 ընտանիքի, 146 ցեղի պատկանող ծաղկի փոշեհատիկների հայտնաբերումը, որոնք պարկանում են ասեճղնատերև և լայնատերև անտառային տեսակների և անտառատափաստանային համակեցության բույսերի: Իսկ նորագույն ժամանակաշրջանի երրորդական շրջանից սկսած այս տարածաշրջանը եղել է բավականին անտառածածկ, որոնցից մնացել է մինյանցից անջատ մեծ և փոքր անտառային զանգվածներ՝ Ծաղկունյաց լեռներում, Գեղամա լեռնավահանի հարավային լեռնաբազուկների (Ազատ և Վեդի գետերի ավազաններում՝ Խոսրովի արգելոց), Արայի լեռան հյուսիսային լանջերին, Հրազդան և Քասախ գետերի կիրճերում, Արագած լեռան հարավարևելյան լանջերին:

Այսպիսով, այս տարածաշրջանի անտառածածկ տարածքների համարյա վերացումը հիմնականում տեղի է ունեցել մեր թվարկության և նախորդ հազարամյակի ժամանակահատվածում, կլիմայական և մարդածին գործոնների ներքո, որն առանձնապես մեծ չափերի է հասել՝ ընդգրկելով վերջին երկու-երեք հարյուրամյակներում՝ հասցնելով այսօրվա անտառազուրկ վիճակին:

Շիրակի բնապատմական շրջանը ներկայումս լրիվ անտառազուրկ է: Մինչդեռ ոչ վաղ անցյալում նրա լեռնային հատվածը եղել է անտառածածկ: Անտառապատ են եղել Ջավախքի լեռնավահանը, Բազումի և Փամբակի լեռնաշղթաների Շիրակով անցնող հատվածը և Շիրակի լեռնաշղթան, որոնցում մինչև օրս պահպանվել են նախկին անտառների հետքերը կաղամախու և ենթանտառային տեսակների մացառուտների տեսքով: Այս տարածաշրջանի խոնավ տիպի լայնասաղարթավոր և ասեղնատերևավոր խառն անտառների օգտին են խոսում նաև Շիրակավանի պեղումներում (մ.թ.ա. 13-12-րդ դարեր) սայլերի մասերի փայտատեսակների պատկանելիությունը՝ լուծը պատրաստված է ոեղել կենու, իսկ սամին՝ թեղու փայտից, որը բնորոշ է անտառային շրջաններին: Ըստ հավանականության՝ Արագածի հյուսիսային լանջերը վաղ անցյալում եղել են անտառապատ, որովհետև Բազումի, Փամբակի, Ծաղկունըաց, Շիրակի լեռնաշղթաների, Ջավախքի լեռնավահանի և Արագածի արևելյան լանջերի անտառների հետ միասին կազմել են մի ամբողջություն:

Հանրապետության հյուսիսարևելյան շրջանները նախկինում և այժմ անտառապատ են: Այստեղ անտառածածկ է եղել նաև Լոռվա սարահարթը՝ Ստեփանավանի և Տաշիրի շրջանների բարձրադիր տարածքը, ինչպես նաև Փամբակ գետի ավազանը (Սպիտակի շրջանը), որը Ջաջուռի լեռներով միացել է Շիրակի տարածաշրջանի անտառներին՝ առաջացնելով ամբողջական զանգված: Սակայն վերջին հարյուրամյակներում մարդածին և կլիմայական գործոնների ազդեցության ներքո այս շրջաններում անտառները համարյա ոչնչացել են, իսկ Գուգարքի, Ալավերդու, Թումանյանի, Նոյեմբերյանի, Տավուշի շրջանների անտառածածկ տարածքները՝ զգալի նվազել են, հատկապես անտառի ոփուղաձիգ սահմանների կրճատման հաշվին:

Կլիմայի փոփոխությունը (ցամաքայնության ուժեղացումը) առավել բացասաբար է ազդել հարավային կողմնադրության արևակող լանջերի անտառածածկ պայմանների վրա՝ խաթարելով անտառի սերմնային ինքնավերականգնման ունակությունը: Հետևաբար, նման պայմաններում սխալ անտառօգտագործումը հանգեցրել է հարավային լանջերում անտառների վերացմանը, հողերի էռոզիային, տարածքի անապատացմանը: Միչդեռ, հյուսիսային կողմնադրության լանջերին կլիմայի փոփոխման բացասական ազդեցությունը հասել է այն չափերի, որ հանգեցրել անտառային սերմնային վերականգնման խաթարման, որի արդյունքում առանձին վայրերում անգամ անտառային ծածկույթի վերացումից հետո անտառների մնացորդները դեռևս պահպանվել են:

Լեռնային վերին գոտում կլիմայական փոփոխությունները պետք է, որ բերել անտառի վերին սահմանի բարձրացում, մինչդեռ անթրոպոգեն ակտիվ և շարունակական գործունեության հետևանքով այն ամենուրեք իջել է: Կլիմայական և անթրոպոգեն գործոնների համատեղ գործունեության հետևանքով անտառապատ տարածքների կրճատումից բացի, տեղի է ունեցել անտառներում տեսակափոխություն, ինչպես նաև տարբեր համակեցությունների զբաղեցրած տարածքների փոփոխություն:

4.ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N7-Ն որոշման համաձայն՝ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառի պետական կառավարման իրավասությունները վերապահվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, իսկ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրավասությունները՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը: ՀՀ բնապահպանության նախարարության իրավասությանն է հանձնվել շուրջ 100 հազ. հա հատուկ պահպանվող անտառային տարածքներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, որի իրավասությանն է վերապահվել հանրապետության շուրջ 344.2 հազ. հա պետական անտառային հողերի (որից անտառածածկ են շուրջ 277,1 հազ. հա) կառավարումը, իր գործառույթներն իրականացնում է աշխատակազմի անտառաբուծության բաժնի և ,Հայանտառե ՊՈԱԿ-ի ու 20 ,Անտառտնտեսություն մասնաճյուղերից միջոցով, այդ թվում.

,Հայանտառե ՊՈԱԿ-ի անտառները և անտառային հողերն ըստ ,անտառտնտեսությունե մասնաճյուղերի

N	«Անտառտնտեսություն» մասնաճյուղի անվանումը	Մարզի անվանումը	Անտառային հողերը /հա/	
			ընդամենը	Այդ թվում անտառածածկ
1	«Արագածոտնի» ա/տ	Արագածոտնի	12628	5215
2	«Լավվարի» ա/տ	Լոռի	26837	24339,5
3	«Զիլիգայի» ա/տ		15292	13851,1
4	«Դսեղի» ա/տ		15330	14505,2
5	«Եղեգնուտի» ա/տ		14082	11826,8
6	«Գուգարքի» ա/տ		16146	10496,9
7	«Ստեփանավանի» ա/տ		6665	5674,9
8	«Տաշիրի» ա/տ		6860	5105,2
9	«Արծվաբերդի» ա/տ		Տավուշ	42837
10	«Նոյեմբերյանի» ա/տ	29254		27001,1
11	«Իջևանի» ա/տ	25512		20955,8
12	«Սևքարի» ա/տ	20484		18236,5
13	«Սյունիքի» ա/տ	Սյունիք	16530	12845,1
14	«Սիսիանի» ա/տ		5419,92	2063,4
15	«Կապանի» ա/տ		38253	35082
16	«Հրազդանի» ա/տ	Կոտայք	22618,42	15068
17	«Գյումրիի» ա/տ	Շիրակ	4737	2000
18	«Վայոց ձորի» ա/տ	Վայոց ձոր	15046,7	7656,2
19	«Ճամբարակի» ա/տ	Գեղարքունիք	9022	6547,2
20	«Երևանի» ա/տ	Երևան	619,9	
	Ընդամենը		344173,94	277134,1

Հայաստանի ՊՈԱԿ-ին են պատկանում նաև 13 հատուկ պահպանվող տարածքները

1. Արջատիլենու արգելավայր (Իջևանի անտառտնտեսություն) – 40 հա – ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. N 341 որոշում:
2. Բանքսի սոճու արգելավայր (Հրազդանի անտառտնտեսություն) – 40 հա – ՀՍՍՀ ՍՍ 29.01.1958թ. N 20 որոշում:
3. Հեր-Հերի նոսրուտային (Վայոց ձորի անտառտնտեսություն) – 6140 հա – ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. N 341 որոշում:
4. Ջերմուկի (Վայոց ձորի անտառտնտեսություն) – 3865 հա (Արփա գետի ավազան) – ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. N 341 որոշում:
5. Եղեգիսի (Վայոց ձորի անտառտնտեսություն) – 4200 հա (Արփա գետի աջափնյա վտակ) – ՀՍՍՀ ՍՍ 16.11.1971թ. N 375 որոշում:
6. Գյուլագարակի սոճուտ (Ստեփանավանի անտառտնտեսություն) – 2590 հա – ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. N 341 որոշում:
7. Կովկասյան մրտավարդի արգելավայր (Գուգարքի անտառտնտեսություն) – 100 հա (Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթա) – ՀՍՍՀ ՍՍ 29.02.1959թ. N 20 որոշում:

8. Մարգահովիտի (Գուգարքի անտառտնտեսություն) – 5000 հա (Փամբակ գետի ավազան) – ՀՄՍՀ ՄՍ 16.11.1959թ. N 75 որոշում:
9. Արգականի և Մեղրաձորի (Հրազդանի անտառտնտեսություն) – 1450 հա (Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազան) – ՀՄՍՀ ՄՍ 16.11.1971թ. N 375 որոշում:
10. Իջևանի (Իջևանի անտառտնտեսություն) – 7800 հա (Իջևանի և Կայենի լառնաշղթա) – ՀՄՍՀ ՄՍ 16.11.1971թ. N 375 որոշում:
11. Գանձաքարի (Իջևանի անտառտնտեսություն) – 6800 հա (Փայտաջուր գետի ավազան և Աղստև գետի ավազան) – ՀՄՍՀ ՄՍ 16.11.1971թ. N 375 որոշում:
12. Գետիկի (Ճամբարակի անտառտնտեսություն) – 6000 հա – ՀՄՍՀ ՄՍ 16.11.1971թ. N 375 որոշում:
13. Գորիսի (Գորիսի անտառտնտեսություն) – 1850 հա, ՀՄՍՀ ՄՍ 16.11.1972թ. N 775 որոշում:

Ձերմության 2-3⁰ բարձրացումը և տեղումների 10% նվազումը հանրապետության անտառատնտեսական մարզերի կլիմայական ներկա պայմաններից ելնելով, անտառային համակեցության վրա կարտահայտվի տարբեր ձևով: Յուսուհասարկեյան մարզում, ուր տեղումները հասնում են մինչև 800 մմ-ի, կլիմայի կանխատեսվող ցամաքեցումը շոշափելի ազդեցություն չի ունենա, բացառությամբ անտառի վերին բնական սահմանի բարձրացման համար ջերմային բարենպաստ պայմանների ձևավորմանը: Ինչ վերաբերում է անտառի ներքին գոտուն, որտեղ տեղումները չեն անցնում 500-600 մմ-ից, հարավային կողմնադրության լանջերում, հատկապես արիդային ծառուտներում ու նոսրուտներում հավանական է դիտվի որոշակի վեր բարձրացումը կամ նրացում ֆրիգանային համակեցության բուսատեսակների մասնակցության մեծացում: Ձերմության բարձրացումը և տեղումների նվազումը նշանակալի ազդեցություն կունենա անտառի սերմային վերակազմման վրա: Եթե ստորին կոտում կլիմային կանխատեսվող փոփոխությունները ստեղծելով խոնավության բացարսական հաշվեկշիռ կառաջացնեն անտառի սերմային բնական վերակազմման համար անբարենպաստ պայմաններ, ապա վերջին գոտում բարելավելով ջերմային ռեժիմը կնպաստեն անտառի նորանալ պտղաբերմանը, սերմային ինքավերականգնմանը և հետևաբար, անտառի վերին եզրի բարձրացմանը: Ձերմության 2⁰ բարձրանալը և տեղումների 10% նվազելն անտառի տեսակային կազմի համար առանձնակի խոցելի չի լինում: Սակայն, բացառվաց չէ, որ հարավային կողմնադրության լանջերին, ստորի գոտում դիտվեն կանխուտների մասնակի փոխարինում ղաժուտներով, իսկ միջին գոտում խառը կաղնուտներից դուս մղվել որոշ մեզոֆիտ ծառատեսակներ (լորի, սրատերև դխկի և այլն): Անտառաճման պայմանների հետագա քսերոֆիտացումն այստեղ, ինչպես նաև հյուսիսային կողմնադրության լանջերն, հաճարի և կաղնու խառը ծառուտներից կազմից աստիճանաբար դուրս կմվեն այնպիսի մնացուկային մեզոֆիտ տեսակներ, ինչպիսիք են հառապտղային կենին, արջատխլենին: Եթե ջերմության և տեղումների կանխատեսվող փոփոխությունները կրեն աստիճանական բնույթ, ապա նրանց խոցելիությունն անտառի կազմի վրա կլինի մեղմ, աննկատ: Իսկ եթե այն կրի թռիչքային բնույթ, ապա բացառված չէ, խոցելի ծառատեսակների անվանացանկը զգալի ընդարձակվի:

«Հայաստառ» ՊՈԱԿ-ի գնահատմամբ փայտանյութի և վառելափայտի գնով հաշվարկված Հայաստանի անտառային հողատարածքի 1 հեկտարի միջին արժեքը կազմում է 1,115,000 ՀՀ դրամ: Անտառների 21-34%-ի կամ 70,000-114,000 հա կորուստը գնահատվում է 78-127 միլարդ դրամի կամ 230-370 միլիոն ԱՄՆ դոլարի սահմաններում: 2010-2100թթ. ժամանակաշրջանում միջին տարեկան արժեքը կկազմի ՀՆԱ-ի 0.03-0.04%: Այդ հաշվարկը չի ներառում նման լայնամասշտաբ անտառազրկման էկոլոգիական կորուստների գինը, ինչպես նաև այլ կորուստներ, կապված որսի, բույսերի և սնկերի հավաքման և արածեցման հետ:

Հավանական է, կանխատեսվող կլիմայական փոփոխությունների նկատմամբ Հայաստանի անտառակազմող ծառառեսակները ցուցաբերեն ադապտացիոն պոտենցիալ մեծ ունակություն և դիմակայեն այդ փոփոխություններին, առանց զգալի խոցելիության:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անտառը բնության կողմից մարդուն պարզևված անգնահատելի հարստությունն է: Հսկայական է նրա ջրհավաք, ջրապաշտպան, հողապաշտպան, կլիմակարգավորիչ դերը: Վիթխարի է նրա նշանակությունը մարդկանց առողջության պահպանման, շրջապատող միջավայրի բարելավման, տնտեսության զարգացման գործում: Պատահական չէ, որ տվյալ երկրի բնության հարստությունների գնահատման ամենահիմնական չափանիշներից մեկը դա անտառն է: Եթե տվյալ երկիրը հարուստ է նաև ջրերով, ռեկրեացիոն ռեսուրսներով, կենդանական և բուսական աշխարհով, վայրի պտուղներով, դեղաբույսերով և այլն; Ինչպես նաև, անտառները բարելավում են կլիմայական պայմանները՝ օդը հարստացնում է թթվածնով: Անտառը, որպես բնական լանդշաֆտ, հանդիսանում է կենսոլորտի տարրերից մեկը: Աճելով բոլոր մայրցամաքներում՝ անտառը զբաղեցնում է շուրջ 41մլրդ հա (Երկրագնդի մակերեսի 8%-ը կամ ցամաքի 31%-ը), կատարում է տնտեսական և բնապահպանական կարևոր դեր:

Նկատի ունենալով անտառների հսկայական տնտեսության դերն ու նշանակությունը հանրապետության տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման, մարդկանց բարեկեցության, հանգստի և առողջության պահպանման գործում, անհրաժեշտ է, որ համապատասխան կազմակերպությունները միջոցներ ձեռնարկեն ընդարձակելու հանրապետության անտառածածկ մակերեսը:

Հանրապետությունում անտառային մակերեսների կրճատումն հիմնականում մարդու անխոհեմ գործունեության արդյունքն է ոչ թե կլիմայան պայմանների փոփոխության արդյունք (ինչպես ենթադրում են մի շարք հետազոտողներ): Դարեր շարունակ անտառները հատվել են անկանոն և անպլանաչափ: Հաճախ հատվում են թերհաս և առողջ ծառերը՝ կարգուն թողնելով թույլ, հիվանդ ծառերին, և արդյունքում ծառերը կորցնում են իրենց կենսունակությունը: Նոր վարելահողերի և արոտավայրերի յուրացման նպարակով հսկայական տարածությունների վրա կտրատվել են բարձրարուն անտառները: Անտառային հսկայական զանգվածներ ոչնչացել են նաև Հայաստանի տարածքում անընդհատ կրկնվող պատերազմների ժամանակ, ինչպես նաև հրդեհներից: Վերջապես, անտառներին մեծ վնաս են հասցրել անասունների երկարատև, ինտենսիվ արածեցումը և խոտհունձ:

Անկանոն անտառահատումները և անտառապաշտպասական միջոցառումների բացակայությունները հանգեցրել են անտառներում կլիմայական պայմանների փոփոխությանը, ինչպես նաև հրդեհավտանգության բարձրացմանը (բարձր ջերմաստիճան, առատ լույս, հատումների հետևանքով թափված ճյուղեր և տերևներ): Դրան է նպաստաոր պայմաններ են ստեղծել վնասատու միջատների և հիվանդությունների բազմացման, ինչպես նաև ծառատուների չորացման և հրդեհավտանգ պայմանների առաջացման համար:

Այսպիսով, մարդու անգիտակից գործունեության, հիմնայանում անսխստեմ և ինտենսիվ հատումների հետևանքով մեր հանրապետության անտառային մակերեսները խչստ կրճատվել են, որը և հասցրել է անտառային գոտու ստորին և վերին բնական սահանների փոփոխությանը: Ուսումնասիրությունները ցույց են ալիս, որ միայն վերջին 200 տարվա ընթացքում Հայաստանի անտառները կրճատվել են 2 անգամ, իսկ ներկայումս Գոյություն ունեցող անտառների 60%-ը մասնակիորեն կամ լրիվ կորցրել է հողապաշտպան և ջրականգավորիչ հատկությունները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջնահերթ խնդիր է անտառավերականգնման աշխատանքների իրականացումը, մասնաորապես համատարած և մասնակի հատված անտառատարածքների վերակարգելու, ինչպես նաև անտառահատման աշխատանքները խթանելու համար՝ բարձրացնելով հանրապետության անտառապատվածության ներկա ցածր մակարդակը: Իսկ անտառների պահպանության և վերականգնման համար առաջարկում ենք հետևյալ միջոցառումները՝

1. Անտառապատ տարածքների ընդլայնումը, ՀՀ անտառային մակերեսը հասցնել գոնե նախկին ցուցանիշին՝ 12% խին:

2. Կատարել անտառատնկում քսենոֆիտ ծառատեսակներից (օրինակ, վրացական կաղին, ժառային կաղին և այլն), որպեսզի դրանք կարողանան դիմանակ կլիմայական չորային պայմաններին:

3. Անտառատնկման աշխատանքներ կարելի է կատարել նաև անտառի ինչպես վերին, այնպես էլ հատկապես՝ ստորին սահմաններում:

4. Պաշտպանական անտառաշերտի ստեղծում (դաշտապաշտպան, ճանապարհապաշտպան):

5. Անտառապաշտպանական միջոցառումների իրականացում վնասատուների, հիվանդությունների, անասունների արածեցման և հրդեհների դեմ:

6. Անտառաշինական, անտառների պահպանության, պաշտպանության, անտառավերակարգման, անտառապատման և անտառօգտագործման ծառայությունների իրականացում:

7. ՀՀ տարածքի միջլեռնային որոշ գոգաորություններում հիմնել արդյունաբերական նշանակության առանձին խոշոր անտառային զանգվածներ՝ որպես անտառափայտի ստացման աղբյուր:

Անտառային ինչպես նաև առանձին արժեքավոր հազվագյուտ խառերի պահպանումը համաժողովրդական գործ է: այդ գործում պետք է շահագործված լինի յուրաքանչյուր քաղաքացիքանի որ անտառը բազմաթիվ բարիքների ստացման աղբյուր է, որի վերականգնումը կամ ստեղծումը պահանջում է երկար ժամանակամիջոց: Բայց, ցավոք, շատ հաճախ տեղական բնակիչները և այլ քաղաքացիներ կամ թե ակամա մասնակից են լինում անտառի ոչնչացմանը, նպաստում նրանց արժեզրկմանը: Շատ դեպքերում անասնապահները անասուններին բաց են թողնում արգելված անտառներում և դրանո իսկ ոչնչացնում շատ դաշ ծառերն ու թփերը, ծառերին հետագայում փոխարինող սերունդը և սերմերը (կաղնու, հաճարի, ընկուզենու, տխլենու և այլ ծառատեսակների), դրանով իսկ արգելակելով վերաճի հնարավորությունները:

Այս բոլոր երեույթները առանձին-առանձին վերցրած թվում է թե ոչ մի նշանակություն չունեն հսկա անտառի համար, կարծես նրա վրա ոչ մի ազդեցություն չեն գործում, բայց երբ այդ չնչին թվացող փոփոխությունները կրկնվում են ամեն տարի, ակնառու է դառնում նրանց բացասական հետևանքները:

Ընդհանրապես չափազանց կարևոր է ոչ միայն անտառի պահպանումը, այլև անտառը կազմող առանձին ծառատեսակների հատկապես վերացող, արժեքատր, հազվագյուտ տեսակների պահպանումը, որոնք ունեն նաև գիտական խոշոր նշանակություն, և որոնց կենսաբանական առանձնահատկությունների պարզաբանումը կարող է խոշոր դեր խաղալ բուսական աշխարհի էվոլյուցիայի առանձին օղակների պարզաբանման համար:

Անտառային ֆոնդի ոչ անտառածածկ հողերը կազմում են 67.600 հա, որից վարելահողեր են 1100 հա, խոտհարքեր՝ 5800 հա, արոտավայրեր՝ 29.900 հա, ջրային մակերեսներ՝ 500 հա, խաղողի և պտղատու այգիներ՝ 2900 հա, ավազուտներ՝ 600 հա, և այլ հողատեսքեր՝ 23.300 հա: Հանրապետությունում եղած սակավ անտառները տարածքային առումով բաշխված են անհավասարաչափ: Նրանց 62%-ը աճում են անտառտնտեսական հյուսիսարևելյան մարզում՝ 36%-ը՝ հարավարևելյան մարզում, մինչդեռ ընդարձակ կենտրոնական մարզում գտնվում է անտառների ընդամենը 2%-ը:

Հանրապետության անտառների ընդհանուր պաշարում, ըստ հիմնական ծառատեսակների, բաժին է ընկնում հաճարին՝ 20,68 մլն.մ³ (ընդհանուր պաշարի 49,54%), կաղնուն՝ 12,5 մլն մ³ (29,85%), բոխուն՝ 6,0 մլն մ³ (14,37%), դաժուն՝ 0,45 մլն մ³ (1,08%): Մյուս ծառատեսակների ընդհանուր պաշարը կազմում է՝ 2,11 մլն մ³ (4,96%): Եզրափակելով Հայաստանի անտառների առկա վիճակի համառոտ վերլուծումը միանշանակ կարելի է փաստագրել, որ երկարատև ինտենսիվ չհամակարգված անտառշահագործման հետևանքով, որի ընթացքում կիրառվել են երբեմն անտառօգտագործման այնպիսի եղանակներ, որոնք չեն համապատասխանում մեզանում անտառ կազմող հիմնական ծառատեսակների կենսաբանական և էկոլոգիական առաձնահատկություններին, որի հետևանքով միայն վերջին

հազարամյակում շուրջ 3-4 անգամ կրճատվել է անտառապատված տարածքը, տեղի տալով հողերի էրոզիոն պրոցեսների զարգացմանը, տարածքի անապատացմանը և կլիմայի ցամաքային բնույթի սրմանը, որն առաձնապես խիստ է արտահայտվել հանրապետության կենտրոնական մասում (Արարատյան գոգավորություն):

Երկարատև սիսալ անտառօգտագործման հետևանքով ներկա անտառածածկ տարածքից 64,9 հազ.հա բարձրաբունանտառներ վեր են ածվել կոճղաշիվային շագման ցածրաբուն փոքր արդյունավետության անտառների, որոնց ածխածին կուտակելու ունակությունը 2-ից 4 անգամ (նայած կոճղաշիվային սերունդի պատկանելիությանը) ցածր է սերմնային ծագման բարձրաբուն ծառուտներից:

Հայաստանում անտառների տարածվածությունը ներկայացվում է հետևյալ լեռնային գոտիներով.

նախալեռնային անտառներ (ստորին անտառային գոտի) – տարածված են 550-1100 մետր բարձրություններում և ներկայացված են հիմնականում ցածրարտադրողական կաղնաղաժուտային անտառային համակեցություններով,

միջին անտառային գոտի – ընդգրկում է 1100-1700 մետր բարձրությունները, որտեղ հաճարկուտները, որտեղ տարածվում են հյուսիսային թեքության լեռնալանջերին, իսկ կաղնուտները՝ հարավահայաց լանջերին,

վերին անտառային գոտի – ընդգրկվում է 1700-2400 (2500) մետր բարձրությունները, որտեղ, ըստ կողմնադրության, տարածված են կաղնու և հաճարենու ցածր լրիվության և բնական վերաճի անբավարար ցուցանիժներով բնութագրվող, ցածր արտադրողական անտառները:

Ամփոփելով Հայաստանի տարածքի պատմական ժամանակներում անտառապատվածության մասին որոշ տեղեկությունների քննարկումը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության՝ հաշվի չառնելով տարածաշրջանի երկրաբանական ձևավորման վաղ ժամանակները, ապա մեր թվարկության առաջին հազարամյակում հանրապետության ներկա տարածքի շուրջ 35-40%-ը եղել է անտառածածկ: Վերջինիս կրճատումը հետևանք է ինչպես կլիմայի փոփոխման, այնպես էլ անթրոպոգեն ակտիվ գործունեության, տեղի տալով անտառների զանգվածային ոչնչացման, և նրանց ուղղաձիգ սահմանների կրճատման, իսկ պահպանված անտառներում՝ տեսակային կազմի փոփոխությունների:

1. Ավագյան Հ.Ա. «Հայաստանի անտառների ներկան ու ապագան.» Հայաստանի Բնություն N 4, 1980
2. Իսկանդարյան Մ.Ա. «Ձանգեզուրի անտառապատվածությունն անցյալում», Հայաստանի Բնություն N 2, 1980
3. Հեղինակային կոլեկտիվ «Կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցությունը Հայաստանում», Երևան, 2009
4. ՀՀ Բնապահպանության նախարարություն միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր գլոբալ ֆոնդ, «Հայաստան. կլիմայի փոփոխության հիմնահարցերը հողվածների ժողովածու», Երևան, 1999
5. <http://www.mnp.am/shriaka-mijavayr/yndhanur-texekutyunner-antar>
6. ՀՀ անտառային օրենսգիրք